

**ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2019/1-3**

«15» 03 2019թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրավոր թարգմանության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը:

ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՎՈՐՈՒՄԱՆ ԿԱՐԳԵՐ ԵՎ ԱՂԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 33 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
900013202016, 900013574018,
02647057
Էդգար Գեվորգյան



Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829



Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

h/h	SU-1 (տեխնիկական գնման/դիագնատախկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 բնօրգքում օգտագործվող պահեստամասերի, քայտուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակերշնեքը (տեսակները)՝ ըստ չափաբաժինների 4-րդ չափաբաժին
		ՎԱՐ 212140 /ՆԻՎԱ Բռնտոմ/ /2015թ/
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները	
1	Բռնկման համակարգի ստուգում	0
2	Կցորդման համակարգի ստուգում	0
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0
5	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները	
	1. Շարժիչ	
1	Շարժիչի հանում և տեղադրում	20000
2	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	10000
3	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	43800
4	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	15000
5	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	10000
6	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	1000
7	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	0
8	Շարժիչի փականների գապանակների փոխարինում	0
9	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	8000
10	Հրիչների կամ հիդրո-հրիչների փոխարինում 1 կ-տ	4000
11	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	15000

12	Ծնկան, լիսեռի հոկում	8000
13	Ծնկան, լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	2000
14	Ծնկան, լիսեռի ներդրակ-ների փոխարինում 1 կ-տ	7000
15	Ծնկան, լիսեռի առամանիվի փոխարինում	0
16	Ծնկան, լիսեռի ուղղում	0
17	Ծնկան, լիսեռի առջևի խցուկի փոխարինում	5000
18	Ծնկան, լիսեռի հետևի խցուկի փոխարինում	5000
19	Շարժիչի բլակի փոխարինում	0
20	Շարժիչի գանի փոխարինում (гвоздка)	6000
21	Մխոցի փոխարինում 1 հատ	1000
22	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
23	Բաշխիչ լիսեռի ակամեցները հանում և տեղադրում կամ փոխարինում	1000
24	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	0
25	Փոկանիվի փոխարինում	1000
26	Շարժիչի առամանավոր փոկի փոխարինում	0
27	Շարժիչի շղթայի փոխարինում	6000
28	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	2000
29	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	0
30	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	3000
31	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	5000
32	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	3000
33	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	0
34	Յուղի ծորակի փոխարինում	0
35	Օդաբաշակ փողրակի փոխարինում	2000
36	Բ/լիսեռի կախարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000
37	Շարժիչի կախարիչի միջադիրի փոխարինում	2000
38	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000

39	Շարժիչի կապույրի փոխարինում	0
40	Շարժիչի կապույրի միջադիրի փոխարինում	0
41	Շարժիչի 2առժաքնի փոխարինում 1 հատ	2000
42	Շարժիչի օդակմերի փոխարինում 1 կ-տ	10000
43	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	0
44	Ստամանակի փոխարինում	0
45	Ստամանակի փոկի փոխարինում	0
46	Ստամանակոր փոկի պատյանի փոխարինում	0
47	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	3000
48	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	0
49	Շարժիչի փոկի հուլավակի փոխարինում	0
50	Շարժիչի հուլավակի առանցքակալի փոխարինում	3000
51	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	0
52	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում	0
53	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	0
54	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	0
55	Շարժիչի գամաների փոխարինում	0
56	Շարժիչի գամաների փոխարինում բնիկի նորոգումով	0
57	Գլխիկի հեղույսի փոխարինում	0
58	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում	2000
59	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	2000
60	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	
61	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	2000
62	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	1000
63	Ավտոմեքենայի յուղում	5000
	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	

64	Յուրի ռադիատորի փոխարինում	0
65	Յուրի ռադիատորի նորոգում	0
66	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	0
67	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	1000
68	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	4000
69	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	3000
70	Օդի գտիչի փոխարինում	500
71	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
72	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	500
73	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	2000
74	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	10000
75	Բոցամուղի կառավարում	0
76	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	500
77	Բենզամուղիչի փոխարինում	6000
78	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	0
79	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000
80	Բռնկման կարգավորում	500
81	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
82	Ղեկավարման բլոկի վերանորոգում	9000
83	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
84	Վառելիքի բաքի մաքրում	0
85	Օդի ծախսի տվիչի փոխարինում	1000
86	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	0
87	Ջրի խառավակի, փառակի փոխարինում	1000
88	Բենզոլբաքի բենզամուղիչի ցանցի փոխարինում	0
89	Բենզոլբաքի բենզամուղիչի ցանցի մաքրում	0
90	Յուրի ճնշման տվիչի փոխարինում	1000

91	Տվիչի փոխարինում	0
	3. Սարեցման և արտաձման համակարգ	
92	Հովիտի փոխարինում	3000
93	Հովիտի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
94	Ուղիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000
95	Ուղիատորի նորոգում	5000
96	Շերտափեղկի փոխարինում	0
97	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	1000
98	Ընդարձակող բաքի փոխարինում	0
99	Ընդարձակող բաքի փողոկայի փոխարինում	2000
100	Ջրի ծորակի փոխարինում	1000
101	Հովացման համակարգի ռետինե փողոկայի փոխարինում	1000
102	Հովիտի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	8000
103	Վառարանի թաղիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	0
104	Վառարանի թաղիատորի նորոգում	5000
105	Վառարանի շարժիչի փոխարինում	4500
106	Թերմոստատի փոխարինում	8000
107	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	0
108	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	2000
109	Գեներատորի փոկի փոխարինում	0
110	Գեներատորի փոկի ձգող հուլովակի փոխարինում	0
111	Ջրի թաղիատորի վերանորոգում	0
112	Թերմոստատի միջադիրի փոխարինում	2000
113	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
114	Խլարարի 1 նասա խողովակի փոխարինում	0
115	Խլարարի անտրի (xamyr) փոխարինում	0
116	Խլարարի ներդիրի փոխարինում	0

117	Խլաբարի կախցի փոխարինում	0
118	Հովացման հեղուկի փոխարինում	0
	4. Կցորդում և ՓՏ	
119	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
120	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	0
121	Կցորդման սկավառավների և առանցքակալի փոխարինում	15000
122	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
123	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
124	Կցորդման փոփոխվելի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000
125	Կցորդման երկժանիքի փոխարինում	1000
126	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	20000
127	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում	0
128	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	1000
129	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	1000
130	ՓՏ-ի հանում և տեղադրում	8000
131	ՓՏ-ի քանդում, արտաավորում, հավաքում	5000
132	ՓՏ-ի պատյանի փոխարինում	0
133	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	2000
134	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	2000
135	ՓՏ-ի առանմանիվի փոխարինում	2000
136	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	2000
137	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	2000
138	ՓՏ-ի փոխարինման մեխանիզմի փոխարինում	0
139	ՓՏ-ի բարձրիկի փոխարինում	2500
140	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	4000
141	ՓՏ-ի յուղի փոխարինում	2000

142	Վագրաչափի շարժաբերի փոխարինում	1500
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	10000
143	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում	5000
144	Բաշխիչ տուփի համում և տեղադրում կամ փոխարինում	0
145	Բաշխիչ տուփի քանարում և արատավորում, հավաքում	3000
146	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	3000
147	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	2000
148	Բաշխիչ տուփի ռիաֆրագումների փոխարինում	2000
149	Բաշխիչ տուփի ռիֆերենցիալի փոխարինում	1000
150	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	1000
151	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	2000
152	Բաշխիչ տուփի երկժանի փոխարինում	2000
153	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	1000
154	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	2000
155	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	3000
156	Կարդանային լիսեռի համում և տեղադրում կամ փոխարինում	4000
157	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	0
158	Բաշխիչ տուփի կայունակի համում և տեղադրում կամ փոխարինում	0
159	Տվիչի փոխարինում	0
160	Բաշխիչ լիսեռի առամնանիկի փոխարինում	0
161	Կարդանային լիսեռի միջ. կախոցի համում և տեղա-դրում կամ փոխարինում	0
	6. Առջևի և հետևի կամրջակներ	
162	Առջևի կամրջակի համում և տեղադրում կամ փոխարինում	5000
163	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ժեղուկոտր) քանդում, արատավորում և հավաքում	0
164	Առջևի կամրջակի կիսատաշնու համում և տեղադրում կամ փոխարինում	5000

165	Առջևի կամրջակի կիսասառնու առանցքակալի փոխարինում	2000
166	Առջևի կամրջակի կիսասառնու առանցքակալի խտաբուկների փոխարինում	1000
167	Կամրջակի յուրի փոխարինում	1000
168	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
169	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	0
170	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
171	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	0
172	Հետևի կամրջակի կիսասառնու հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
173	Հետևի կամրջակի կիսասառնու առանցքակալի փոխարինում	5000
174	Հետևի կամրջակի կիսասառնու առանցքակալի խտաբուկների փոխարինում	2000
175	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
176	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	0
177	Հետևի կամրջակի բլոկավոր-ման համակարգի նորոգում	0
178	Կամրջակի տվիչի փոխարինում	0
	7. Կախոց	0
179	Տրավերտի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
180	Չախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
181	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5000
182	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
183	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
184	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	2000
185	Անվակունդի գաճախների և հեղուկի փոխարինում(ծեկ անիլի համար)	3000
186	Չախ կամ աջ հողակալի խտաբուկների փոխարինում	

187	Ցնցամեղմիջի թասակի փոխարինում	0
188	Առջևի գապամակի փոխարինում	0
189	Առջևի ցնցամեղմիջի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000
190	Հարվածամեղմիջի վառանների փոխարինում	500
191	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
192	Ներքևի լծակի վառանների փոխարինում 1 հատ	1500
193	Ներքևի լծակի հերույսի փոխարինում	1000
194	Հարվածիջի (բարձիկի փոխարինում)	0
195	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
196	Վերևի լծակի վառանների փոխարինում 1 հատ	1000
197	Վերևի լծակի հերույսի փոխարինում	0
198	Հետևի վերևի լծակի վառանի փոխարինում 1 հատ	0
199	Գնդե հողակապերի պատյանի փոխարինում	4000
200	Գնդե հողակապերի փոխարինում	3000
201	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
202	Առջևի կայունարարի վառանների փոխարինում	0
203	Հետևի կայունարարի վառանների փոխարինում	500
204	Կայունարարի կայունակի փոխարինում	0
205	Հետևի գապանակների փոխարինում	0
206	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000
207	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
208	Զսպամի փոխարինում	0
209	Զսպամի վառանների փոխարինում 1 հատ	4000
210	Հետևի ցնցամեղմիջի փոխարինում	500
211	Հետևի հարվածամեղմիջի վառանների փոխարինում	1000
212	Անկյունագծային լծակի վառանների փոխարինում 1 հատ	
	8. Ղեկային մեխանիզմ	

213	Ղեկավարունակի (USuSվՍՈ) հիմնական նորոգում,	0
214	Ղեկավարունակի (USuSվՍՈ) արորիկի փոխարինում	0
215	Ղեկավարունակի (USuSվՍՈ) առանցքային առնու փոխարինում	0
216	Ղեկավարունակի (USuSվՍՈ) խաչուկների փոխարինում	0
217	Ղեկավարունակի (USuSվՍՈ) վերանորոգման հավաքածույի փոխարինում	0
218	Ղեկավարունակի (USuSվՍՈ) քանդում, արատավորում, հավաքում	0
219	Ղեկային մեխանիզմի ագրանշանի փոխարինում	0
220	Ղեկավարունակի պատյանի փոխարինում	0
221	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	0
222	Ղեկային մեխանիզմի ղեկավարունակի ամրացման ամուրի փոխարինում	0
223	Ղեկային ծողի առանցքակալի փոխարինում	4000
224	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	3000
225	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	0
226	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում	0
227	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000
228	Հիդրոուժեղարարի միջի փոխարինում	9000
229	Հիդրոուժեղարարի միջի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	2000
230	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
231	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	1800
232	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	0
233	Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածույի փոխարինում	0
234	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
235	Ղեկային ծողի գնդե հողակալի նորոգում	0
236	Ղեկային ձգածողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	3000

237	Ղեկի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
238	Ղեկային ծագածողի ծայրակայանների փոխարինում	3000
239	Հիդրոուժեղարարի համա-կարգի յուղի փոխարինում	1800
	9. Արգելակային համակարգ	
240	Վակուումային ուժեղարարի փոխարինում	5000
241	Վակուումային ուժեղարարի փակման փոխարինում	0
242	Գլխ. գլանի հանում և տեղա-դրում կամ փոխարինում	3000
243	Գլխ. գլանի հիմնական նորո-գում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	0
244	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
245	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում,	0
246	Առջևի սուպարտի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
247	Հետևի սուպարտի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
248	Առջևի սուպարտի վերանորոգում	0
249	Հետևի սուպարտի վերանորոգում	0
250	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	0
251	Արգելակի վթարային արգելա-հանման լծակի նորոգում	0
252	Արգելակային փողոսի փոխարինում	1500
253	Արգելակային կոճղակների փոխարինում	4000
254	Արգելակային համակարգի օդահանում	500
255	Մկավառակային կոճղակների փոխարինում	0
256	Թմբուկային կոճղակների փոխարինում	4500
257	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4000
258	Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	5000
259	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	0
260	Հետևի արգելակային թմբուկա հղկում 1հատ	4500
261	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0

262	Ձեռքի արժեզրկային մեխանիզմի վերանորոգում	1000
263	Ձեռքի արժեզրկային ճուպանի համուռ և տեղադրում կամ փոխարինում	2000
264	Ձեռքի արժեզրկային ճուպանի վերանորոգում	0
265	Հետևի արժեզրկային կարգավորում	0
266	Արժեզրկային հեղուկի փոխարինում	500
	10. Էլեկտրասարքավորում	
267	Չեններատորի համուռ, տեղա-դրում կամ փոխարինում	4000
268	Չեններատորի քանդում և արատավորում, հավաքում	4000
269	Չեններատորի ստատորի փոխարինում	0
270	Չեններատորի ռոտորի փոխարինում	0
271	Չեններատորի լիցքավորման ռելեի փոխարինում	3000
272	Չեններատորի դիողային կամրջակի փոխարինում	3000
273	Չեններատորի առանցքակալի փոխարինում	2000
274	Չեններատորի փոկանիվի փոխարինում	1000
275	Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում	4000
276	Մեկնարկիչի խարիսխի փոխարինում	1000
277	Մեկնարկիչի իրանի փոխարինում	1000
278	Մեկնարկիչի բռնիչի փոխարինում	1000
279	Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում	2000
280	Մեկնարկիչի ակտոմատի փոխարինում	2000
281	Մեկնարկիչի ռելեի փոխարինում	2000
282	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	3000
283	Ազդանշանի կարգավորում	0
284	Ազդանշանի համուռ և տեղա-դրում կամ փոխարինում	2000
285	Առջևի լապստերի համուռ և տեղադրում կամ փոխարինում	3000
286	Սալոքերի պանելի համուռ և տեղադրում	1000
287	Հետևի լապստերի համուռ և տեղադրում կամ փոխարինում	2000

288	Առջևի լապտերների կարգավորում	1000
289	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	2000
290	Վառոցքի կոճի հանում և տեղադրում	1800
291	Ինյուկցիոն կոճի հանում և տեղադրում	0
292	Վազքաչափի փոխարինում	0
293	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
294	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	0
295	Սպակելվացիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
296	Սպակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
297	Սլափոսվիչների փոխարինում	5000
298	Սպակեամբարձիչների փոխարինում	2000
299	Սպակեամբարձիչների շարժիչի փոխարինում	1000
300	Էլեկտրական սովիչների փոխարինում	1000
301	Էլեկտրական անջատիչների փոխարինում	0
302	Մարտկոցի կլեմանների փոխարինում	1000
303	Ալյումյատորի դրական էլեկտրոլարի փոխարինում	1000
304	Ալյումյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում	0
305	Էլ/ կոճակի փոխարինում	0
306	Էլեկտրական շտեյկերի փոխարինում	0
307	Ջրի ցողիչի փոխարինում	0
308	Բեռնախցիկի փականի փոխարինում	0
309	Հագոցի փականի փոխարինում	
	11. Ավտոմեքենայի սրահ	1000
310	Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում	3000
311	Դռան փականի փոխարինում	3000
312	Բեռնախցիկի ճոպանի փոխարինում	1000
313	Լամպի փոխարինում	

314	Ամրակներ (կլիպս) փոխարինում 1հատ	0
	12. Այլ ծառայություններ	
315	Եռակցման աշխատանքներ գին 1տճ (գծ.մ) համար	1000
316	Խառատային աշխատանքներ գին 1 կտորի համար	1000
317	Փականագործական աշխատանքներ գին 1 ժամ աշխատանքի համար	2000
318	Առջևի կամ հետևի անվաքացի կարգավորում	5000
319	Անիվի հանում և տեղադրում	1000
320	Անվարդի վերանորոգում	1000
321	Անիվի բալանսավորում	1000
322	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	
	SU-2 բնօրհացքում օգտագործվող պահեստամասերի, քայտուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	
	1.Շարժիչ	0
1	Շարժիչի բոկ	0
2	Շարժիչի գլխիկ	5000
3	Բարձիկ	4000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	10000
5	Շարժիչի միջադիրների կոմպլեկտ	4000
6	Շարժիչի փական դուրս մղող	4000
7	Շարժիչի փական ներս մղող	500
8	Շարժիչի փականի խտաբուկ	0
9	Փականի գապանակ	0
10	Ծնկածն լիտեռ	2000
11	Ծնկածն լիտեռի խտաբուկ առջևի	3000
12	Ծնկածն լիտեռի խտաբուկ հետևի	5000
13	Ծնկածն լիտեռի արձատական ներդիրներ	5000
14	Ծնկածն լիտեռի շարժաթևային ներդիրներ	6500
15	Մխոց	

16	Մխցային օղակներ	11000
17	Մխցային մատ	2000
18	Ատամնամիկ	0
19	Ատամնավոր փոկ	0
20	Շարժիչի կապույր	0
21	Շարժիչի կապույրի կախարիչ	10000
22	Շարժիչի շղթա	0
23	Շարժիչի պաշտպանիչ	0
24	Փոկի ձգիչ	12000
25	Հիդրոձգան	1500
26	Հրիչ	5500
27	Շարժիչի ինդրոիդիչ	2000
28	Շարժիչի կայուն	2000
29	Շարժիչի համըարտիչ	0
30	Շարժիչի հողովակ	0
31	Շարժիչի հողովակի առանցքակալ	0
32	Շարժիչի առջևի կախարիչ	0
33	Շարժիչի վերևի կախարիչ	2000
34	Շարժիչի վերևի կախարիչի միջադիր	0
35	Թափամիկ	0
36	Շարժաթև	0
37	Ատամնամիկ բաշխիչ լիսեռի	0
38	Ատամնամիկ ծնկածն լիսեռի	0
39	Փոկամիկ ծնկածն լիսեռի	0
40	Փոկամիկ	0
41	Սուխարիկ փականի	0
42	Գլխիկի բոլո	0
43	Ծնկածն լիսեռի բոլո	0

44	Պարկուճ (ՀՆԱՖՁՈ)	0
45	Քարտեր	0
46	Շարժիչի ատամնավոր փոկ	0
47	Պատյան ատամնավոր փոկի	0
48	Փակվան յուղի տարայի	2000
49	Խուսի ընդարձակման բաքի	0
50	Խուսի շարժիչի	0
51	Թաթիկ յուղի մղիչի	5000
52	Բարձիկ փ/տուսի	15000
53	Յուղի մղիչ	0
54	Միջադիր յուղի մղիչի	0
55	Յուղի ծորակ	0
56	Շարժիչի յուղի արանքաչափիչ	0
57	Շարժիչի յուղի արանքաչափիչի իրան	0
58	Կակույրի միջադիր	2000
59	Քարտերի միջադիր	22000
60	Շարժիչի բաշխիչ լիսեռ	0
61	Բ/լիսեռի կափարիչ	0
62	Բ/լիսեռի խտաբուկ	4500
63	Շարժիչի Բ/լիսեռի ականոց	0
64	Շարժիչի Բ/լիսեռի երիթակ	0
65	Ուղղորդիչ վռան	0
66	Շարժիչի գամասեղ	0
67	Գլխիկի միջադիր	
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	2500
68	Յուղ շարժիչի հանքային, 1/1	4000
69	Յուղ շարժիչի կիսահանքետիկ, 1/խոր	6000
70	Յուղ շարժիչի սինթետիկ, 1/1	

71	Յուղման համակարգի վաճման հեղուկ 1/իտր	1000
72	Յուղի գտիչ	2500
73	Յուղի թաղիատոր	0
74	Վառոցքի կոճ	20000
75	Արտածման կալեկտոր աջ	0
76	Արտածման կալեկտոր ձախ	0
77	Ներածման կալեկտոր աջ	0
78	Ներածման կալեկտոր ձախ	2000
79	Արտածման կալեկտորի աջ միջադիր	0
80	Արտածման կալեկտորի ձախ միջադիր	2000
81	Ներածման կալեկտորի աջ միջադիր	0
82	Ներածման կալեկտորի ձախ միջադիր	1000
83	Վառոցքի մոճ	0
84	Բենզոլաբաթի բենզոմոլիչի ցանց	0
85	Բենզոմոլիչ	0
86	Բենզոլաբաթ	10000
87	Ինժեկտորի բոցամուղ բենզինով շարժիչի	500
88	Բոցամուղի խտաբուկ	22000
89	Վառելանյութի մղիչ էլեկտրական	4000
90	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	0
91	Վառելիքի կոշտ մաքրման գտիչ	1500
92	Վառելանյութի խողովակ	4500
93	Օդի գտիչ	0
94	Օդի ծախսաչափիչ	0
95	Օդի գտիչի փողորակ	3000
96	Ջերմատրիճանալին տվիչ	3000
97	Յուղի տվիչ	5000
98	Բաշխիչ լիտերի տվիչ	

99	Օրի ծախսի տվիչ	0
100	Արագաչափի տվիչ	0
101	Հովիարի տվիչ	3500
102	Ջրի խողովակ երկար	1500
103	Ջրի խողովակ կալոճ	1500
104	Ջրի տվիչ	0
105	Բենզոլրաքի տվիչ	0
106	Մալոնան ընթացքի կարգավորիչ	8000
107	Ղեկավարման համակարգիչ	0
108	Պարապ ընթացքի տվիչ	0
109	Թթվածնի տվիչ	0
	3. Սառեցման և արտաձման համակարգ	15000
110	Հովիար	0
111	Հովիարի շարժիչ	0
112	Հովիարի թևանիվ	35000
113	Ռադիատոր	0
114	Ընդարձակող բաքի փական	0
115	Ընդարձակող բաքի փողոցակ	8000
116	Ընդարձակող բաք	3000
117	Ռադիատորի փողոցակ ներքևի	3000
118	Ռադիատորի փողոցակ վերևի	9000
119	Թերմոստատ	11000
120	Ջրի մղիչ	0
121	Ջրի մղիչի միջադիր	0
122	Ջրի պոմպի խտաբուկ	0
123	Ջրի պոմպի առանցքակալ	0
124	Ջրի պոմպի թևակ	0
125	Սառեցման հեղուկ 1 լիտր	2000

126	Զարաչող հերոսկ ապակիների համար	1500
127	Ջգիչ հուլովակի	0
128	Փոկ մեծ	4000
129	Հովացման համակարգի ռեալիզե խողովակ	0
130	Ծորակ	0
131	Փոկանիվ գեներատորի փոկի	0
132	Միջադիր թերմոստատի	0
133	Խլարարի ներդիր	1000
134	Խլարարի կախոց	0
135	Խլարարի խողովակ	0
136	Կրոնշտեյն	1000
137	Խլարարի անուր (խամուտ)	15000
138	Խլարար	0
139	Շարժիչ վառարանի	13000
140	Վառարանի ջարիատոր	
	4. Կցորդում և ՓՏ	8000
141	Կցորդման աշխատանքային գլան	11000
142	Կցորդման գլխավոր գլան	0
143	Կցորդման գլխավոր գլանի կալունակ	0
144	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	29000
145	Կցորդման սեղմող սկավառակ	25000
146	Կցորդման տարվող սկավառակ	8000
147	Կցորդման առանցքակալ	0
148	Կցորդման ուռնակ	0
149	Կցորդման ճուպան	2000
150	ՓՏ-ի յուղ	0
151	ՓՏ-ի պատյան	
152	ՓՏ-ի առջևի խտաբուկ	1000

153	ՓՏ-ի հետևի խտաբուկ	1000
154	Վագբաչափի շարժաբեր	0
155	ՓՏ-ի առանցքակալ	6500
156	ՓՏ-ի փոխանցման փոշեթիկոց	0
157	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմ	0
158	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0
159	ՓՏ-ի երկրորդային լիսեռ	0
160	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	4000
161	ՓՏ-ի երկժամի	8000
162	ՓՏ-ի ատամնանիվ	9000
163	Համաժամիչ	2000
164	ՓՏ-ի վերամորոզման կոմպլեկտ	1800
165	Հերմետիկ	
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	0
166	Բաշխիչ տուփ	2000
167	Բաշխիչ տուփի խցուկ	5500
168	Բաշխիչ տուփի առանցքակալ	0
169	Բաշխիչ տուփի ատամնանիվ	0
170	Բաշխիչ տուփի լիսեռ	65000
171	Կարդանային լիսեռ	12000
172	Էլաստիկ մուֆտ	0
173	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	8000
174	Կարդանային լիսեռի խաչուկ	
	6. Առջևի և հետևի կամրջակներ	
175	Հետևի կամ առջևի կամրջակ	0
176	Ուղղակտոր	0
177	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	0
178	Ղիֆֆերենցիալ	0

179	Դիֆֆերենցիալի սատելլիտ	0
180	Տանող ատամնանիվի խցուկ	0
181	Տանող ատամնանիվի առանցքակալ	0
182	Դիֆֆերենցիալի առանցքակալ	3500
183	Չախ կամ աջ կիսաստնու փոշեթիկնոց	0
184	Կիսաստնի	8000
185	Կիսաստնու առանցքակալ	0
186	Կիսաստնու միջադիր	2000
187	Կիսաստնու խցուկ	0
188	Կարգավորիչ տակողակ	
	7. Կախոց	0
189	Տրավերս	0
190	Կրոնշտեյն	26000
191	Աջ կամ ձախ հողակապ	12000
192	Անվակուներ	0
193	Անվակուների խցուկ	6000
194	Անվակուների ներքին առանցքակալ	6000
195	Անվակուների արտաքին առանցքակալ	0
196	Հետևի անվակուների առանցքակալ	0
197	Հարվածամեղմիչի թասակ	0
198	Չսպանակ	12000
199	Առջևի հարվածամեղմիչ	0
200	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	2000
201	Հարվածամեղմիչի վշան	0
202	Ներքևի լծակ	1500
203	Ներքևի լծակի վշան	0
204	Վերևի լծակ	0
205	Շվկոննի	0

206	Ուեբքայլոյ	0
207	Վերկի լծակի վրան	1500
208	Գնդե հողակապ	6500
209	Առջևի կայունարար	0
210	Առջևի կայունարարի վրան	2000
211	Առջևի կայունարարի կանգնակ	0
212	Հետևի գրպանակ	8000
213	Ճոճանակային լծակ	1500
214	Ճոճանակային լծակի վրան	12000
215	Հետևի ցնցամեղմիչ	8000
216	Հետևի մետաղաձող (շտանգա)	1000
217	Հետևի մետաղաձողի (շտանգա) վրան	0
218	Հետևի անկյունագծային լծակ	1000
219	Անկյունագծային լծակի վրան	0
220	Զսպակ (ռետորա)	0
221	Զսպակի վրան	0
222	Զսպակի միջադիր	0
223	Զսպակի բռնիչ	8000
224	Աջ կամ ձախ ձգան	
	8. Ղեկային մեխանիզմ	0
225	Ղեկային կայուն	0
226	Ղեկային կայունի առանցքակալ	0
227	Ղեկային կայունի վերամորոգման կոճպէկտ	0
228	Ղեկային կայունի խաչուկ	3000
229	Հորիզոնեղարարի փուկ	0
230	Հորիզոնեղարարի պոճա	0
231	Հորիզոնեղարարի պոճաի վերամորոգման կոճպէկտ	8000
232	Չգան մեջտեղի	

233	Ղեկային ձող	0
234	Ղեկային ձողի ծայրակալ	5000
235	Հիդրոուժեղարարի յող. 1/.	5000
236	Ճոճանակ	0
237	Ճոճանակի վռան	0
	9. Արգելակային համակարգ	25000
238	Գլխ. գլան	0
239	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	25000
240	Վակուումային ուժեղարար	8000
241	Բանվ. գլան	0
242	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	2000
243	Արգելակային փողորակ	0
244	Սուպարոտ	2000
245	Արգելակային հեղուկ	6500
246	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	12000
247	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	18000
248	Առջևի արգելակային սկավառակ	6000
249	Ձեռքի արգելակի ճոպան	6000
250	Ձեռքի արգելակի լծակ	
	10. Էլեկտրասարքավորում	60000
251	Գեներատոր	6500
252	Գեներատորի դիոդային կամրջակ	4500
253	Գեներատորի ռեկե	3000
254	Գեներատորի առանցքակալ	50000
255	Ստարտեր	0
256	Ստարտերի ռեկե	6000
257	Ստարտերի ածուխ	10000
258	Բենդեքս	

259	Ստալուտների կցորդիչ (ավտոմատ)	10000
260	Առջևի լապսեր	1000
261	Հետևի լապսեր	1000
262	Հակամշուշային լապսեր	0
263	Առջևի թարթիչ	0
264	Հետևի թարթիչ	0
265	Արգելակային լապսեր	0
266	Խցիկի լապսեր	0
267	Խցիկի լապսերի լամպ	1000
268	Արգելակային լապսերի լամպ	1000
269	Առջևի թարթիչ լապսերի լամպ	1000
270	Հետևի թարթիչի լապսերի լամպ	1000
271	Հետևի լապսերի լամպ	2000
272	Հակամշուշային լապսերի լամպ	0
273	Արգելակային լապսերի լամպ	3000
274	Առջևի լապսերի լամպ	0
275	Էլեկտրական անջատիչ	0
276	Էլեկտրական տվիչ	0
277	Տախտմետր	2000
278	Ապակեմաքրիչ	8000
279	Բռնկման կողպեք	0
280	Էլեկտրալարերի գլխավոր խուրջ	0
281	Էլեկտրալարերի երկրորդային խուրջ	9000
282	Վառոցքային լարերի խուրջ	0
283	Վառոցքի մոմի ծայրակալ	0
284	Վազքաչափ	0
285	Վազքաչափի ճուպան	0
286	Դռան կողպեք	0

287	Ազդանշան	0
288	Ապակելվացիչի բաջով	5000
289	Ապակելվացիչի շարժիչ	10000
290	Դռների կենտրոնական փական	0
291	Հայելի կողային	0
292	Դռան ապակու ամբարձիչ	0
293	Դռան ապակու էլեկտրամեքանիկական շարժիչ	10000
294	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր 1 կտորի վերանորոգման համար	1 720 000
Ընդամենը		1 720 000

* Ծառայության մատուցումը պետք է իրականացվի կնքված պայմանագրով հաստատված գնի սահմաններում՝ ըստ գնացուցակ

**Այն մասերը, որոնք ենթակա չեն վերնորոգման, պետք է փոխարինել նորով՝ յուրաքանչյուր ավտոմեքենայի համար, առնվազն 6 ամիս երաշխիքային ժամկետով:

*** Ծառայությունների մատուցման ժամկետը՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2019 թվականի դեկտեմբերի 15-ը ներառյալ:

Այլ պայմաններ

1. Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:

2. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում, երբ փոխարինվող պահեստամասերը տվյալ պահին առկա չեն Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:

3. Տեխսպասարկման կայանը պետք է լինի Երևան քաղաքում: Այն պետք է հագեցած լինի առնվազն 6 ամբարձիչներով մինիմում երեք տոննա բարձրացնելու կարողությամբ:

4. Տեխ. սպասարկման կայանը պետք է ունենա դիտափոս, անվաբացքի կարգավորման ստենդ, ինժեկտորի լվացման և կարգավորման ստենդ, արգելիչների ստուգման ստենդ, էլեկտրական բնույթի խափանումները վերացնելու հնարավորություն, ավտոփականագործ, շարժիչագործ, ավտոէլեկտրիկ, ինժեկտորային մասնագետ,

ախտորոշման/դիագնոստիկ սարք նշված ավտոմեքենաների ծրագրով, կատարի շարժիչի և նրա համակարգերի, ուժային և ղեկավարման համակարգերի բնթացային մասի և թափքի ինչպես բնթացիկ այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ:

5. Պետք է ապահովված լինի փակ և պահպանվող տարածքով՝ պահակային ծառայության կողմից 24 ժամ հսկողություն իրականացվող առնվազն 20 ավտոմեքենայի համար:

6. Պետք է ունենա ավտոքարշակ՝ 3.5 տոննա նվազագույն բեռնատարողությամբ, որը վթարված ավտոմեքենան անկախ դրա գտնվելու վայրից պետք է տեղափոխի տեխ. սպասարկման կայան:

7. Ավտոմեքենայի անհրաժեշտ նորոգման և տեխնիկական սպասարկման համար Կատարողը պարտավոր է պատվիրատուի նշված ժամկետում և պահանջով բնորոնել ավտոմեքենան SU կայան և անմիջապես իրականացնել պատվիրատուի նշված ժամկետում, զննման և գնահատման աշխատանքներ:

8. Ցուրաքանչյուր ավտոմեքենայի սպասարկման և նորոգման համար պատվիրատուի պահանջով կատարողի կողմից կազմվում, կնքվում և պատվիրատուին է ներկայացվում նախնական զննման և գնահատման ակտ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մոլոտե Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական


վարչություն
900013202016, 900013574018,
02647057

Էրգար Գեղորգյան



ԿԱՏԱՐՈՂ

«Մ-Բի-Ո» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ազրիկոյ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ձ/Հ	Բյուջետային ն ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Անվանումը և գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության				Ընդամենը
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	
Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՊԵԿ 2019 թ արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ եռամսյակների, այդ թվում							
4	4252	ՎԱՁ 212140 /ՆԻՎԱ Բռնստո/ /2015թ/ CPV 50111170/3	375 000	750 000	1 125 000	1 500 000	1 500 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
 ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
 ՖՆ աշխատակազմի գործառնական
 վարչություն
 900013202016, 900013574018,
 02647057
 Էդգար Գեվորգյան



Խտորագրություն/
 Վ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
 ք. Երևան, Մյասնիկյան 22/4
 «Ակթա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 220083335012000
 ՀՎՀՀ 08417829

ՍՊԸ ի տնօրեն



Վ.ԱՄՆԱՐՅԱՆ
 Վ.Տ

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն